ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ
ՆՎԻՐՎԱԾ ՍԱՍՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

1994 թ. սեպտեմբերի 20-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտում տեղի ունեցավ գիտական նստաշրջան, նվիրված Սասունի հայ բնակչության ինքնապաշտպանական մարտերի 100-ամյակին։ Բացելով նստաշրջանը պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիայի թղթակից անդամ Հ. Ավետիսյանը ասաց. Պատմության ինստիտուտի գիտական գործունեության մեջ կարևոր տեղ են գրավում հայ ազգային-ազատագրական շարժումների և արևմտահայության կոտորածների պատմության ուսումնասիրության հարցերը։ Վերջին շրջանում, օրինակ, անց են կացվել մի շարք գիտական կոնֆերանսներ նվիրված Զեյթունի 1862 թ. և հետագա շրջանի ինքնապաշտպանական պայքարին, զորավար Անդրանիկի ծննդյան 125-ամյակին, կամավորական շարժումներին, դաղթօջախներում ծավալված հայրենասիրական շարժմանը և այլ խնդիրների։ Հետաքրքիր է նկատել, որ մեր ինստիտուտում դեռևս 1946 թ. Մ. Ներսիսյանը պաշտպանել է իր «Հայ ժողովրդի պայքարը թուրքական դեսպոտիզմի դեմ» մենագրությունը որպես դոկտորական դիսերտացիա, որը սակայն լույս տեսավ 1955 թ., Ստալինի մահվանից հետո միայն։

Ինստիտուտի հրատարակած գիտական աշխատություններում անհերքելիորեն ժխտվում են հակագիտական այն տեսակետները, որ Արևմտյան Հայաստանում հայ-ազատագրական շարժումները իբր արհեստականորեն հրահրվել են դրսից և որ, եթե չլինեին ազատագրական շարժումները, ապա չէին լինի հայերի կոտորածները և ցեղասպանությունը։ Ձեզ իհարկե հայտնի է, որ այսպիսի արտառոց մտքեր քարոզում են պատմության թուրք կեղծարարները։ Մեր գիտական աշխատողները հիմնավորապես ցույց են տվել, որ հայդուկային ու կամավորական շարժումը, ինքնապաշտպանական կռիվները թուրքական բռնատիրության դեմ բուռն ցասման դրսևորումներ էին ընդդեմ կեղեքման, բնաջնջման՝ հանուն ազգային գոյատևման։

«Արևմտահայերի կոտորածների քաղաքականությունը Օսմանյան Թուրքիայում 1880—1890-ական թթ.» թեմայով հանդես եկավ ակադեմիկոս Մ. Ներսիսյանը։ Հանրահայտ է, ասաց նա, որ օսմանյան բռնապետությունը իր տիրապետության տակ գտնվող բոլոր ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ միշտ էլ վարել է տղղային բիրտ ճնշումների ու հալածանքների, սոցիալական կեղեքումների և հարստահարությունների դաժան քաղաքականություն։ Սակայն հայության նկատմամբ այդ բարբարոսական քաղաքականությունն ավելի խստացավ և նոր իմաստ ու որակ ստացավ անցյալ դարի 80—90-ական թթ.։ Եթե թուրք-օսմանյան սուլթանները մինչ այդ տարիները հանդուրժում էին հայերի ֆիզիկական գոյությունը, որպեսզի ամեն կերպ թալանեն ու կեղեքեն նրանց, ապա 1870-ական թթ. սկսած օսմանյան պետությունը վարեց հայության զանգվածային կոտորածների, կամ, այլ կերպ ասած, ցեղասպանության, գենոցիդի քաղաքականություն։

Սուլթան Աբդուլ Համիդ երկրորդը՝ խորամանկ ու փարիսեցի այդ փադիշահը փորձեր արեց թաքցնել իր հայաջինջ գործունեությունը, բայց այդ նրան չհաջողվեց։ 1870-ական թթ. վերջերին արդեն ռուսական, հայկական ու եվրոպական մամուլում տպագրվեցին մի շարք նյութեր թուրքական կառավարության հայաջինջ քաղաքականության վերաբերյալ։ Խիստ բնորոշ է, օրինակ, որ 1879 թ. մամուլում հրապարակվեց մեծ վեզիր Քյամիլ փաշայի հայտարարությունն այն մասին, որ Օսմանյան կայսրության անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է ոչնչացնել արևմտահայությանը և դրանով իսկ վերջ տալ Հայկական հարցին։ Ավելի ուշ հայկական կոտորածների մասին արժեքավոր հոդվածներով ու գրքերով հանդես եկան այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք էին իռլանդացի արևելագետ Էմիլ Դիլլոնը, ռուս մտավորականներ Յուրի Վեսելովսկին, Լ. Կոմարովսկին, Վ. Սոլովյովը, գերմանացի հումանիստ Յոհաննես Լեփսիուսը, ամերիկացի միսիոներներ Ֆ. Գ. Գրինը, Ե. Մ. Բլիսը, ֆրանսիացի պատմարան ժակ դը Մորգանը և ուրիշներ։ Միաժամանակ բողոքներով ու դիմումներով հանդես եկան Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկը, արտասահմանյան հայ համայնքներն ու կազմակերպությունները, հրապարակվեցին ականատեսների վկայություն-

ները և այլն։ Հաստատվեց այն իրողությունը, որ 1880—1890-ական թթ. շարդերը համընդհանուր կոտորածներ են։ Հետագայում պարզ դարձավ, որ դա, ըստ էության, 1915 թ. Մեծ եղեռնի սկիզբն էր։

Պատմական գիտությունների դոկտոր Ա. Համբարյանի զեկուցումը նվիրված էր «Սասունի 1894 թ. ապստամբությունը և հայ ազգային կուսակցությունները» հարցին։ Զեկուցողը նշեց, որ XIX դարի վերջին Սասունի հայ գյուղացիները շարունակում էին տառապել պետական և քուրդ ցեղապետերի ծանր հարկերի տակ։ Ֆեոդալ աղաները հաստատել էին խաֆիրության իրավունքը, որը ճորտության ամենասոսկալի ձևերից մեկն էր։ Նրանք տիրում էին գյուղացիների ոչ միայն հողին, այլև անձին. կարող էին վաճառել այդ հողագործներին հողով կամ առանց հողի, բաժանել իրենց ժառանգների միջև, ամուսնացնել կամ ամուսնալուծել իրենց ցանկությամբ, սահմանել նրանց վրա զանազան հարկեր ու տուրքեր և այլն։

1891 թ. սկսած Սասունում ապստամբական գործուն քարոզչություն ծավալեց հնչակյան Միհրան Տամատյանը, որի համար նա 1893 թ. ձերբակալվեց իշխանությունների կողմից և ուղարկվեց Կ. Պոլիս։ Նրա գործը շարունակեց հնչակյան մի այլ գործիչ՝ Համբարձում Պոյաճյանը (Մուրատը)։ Հնչակյանների քարոզչության ազդեցությամբ սասունցիները հրաժարվեցին պետության ու աղաների հարկերի վճարումներից և 1894 թ. ամռանը դիմեցին զինված ապըստամբության, որը սակայն ճնշվեց նույն թվականի օգոստոսին։ Դաշնակցականները չըմասնակցեցին Սասունի ապստամբությանը, բայց բարոյապես պաշտպանեցին այն։ Ապըստամբության օրերին նրանց օրգան «Դրոշակը» գրում էր, որ պետք է թոթափել օսմանյան խայտառակ լուծը և ձեռք բերել ազատություն։ Մենք չունենք տեղեկություններ արմենական կուսակցության դիրքորոշման մասին Սասունի ապստամբության նկատմամբ։ Սակայն «Արմենիա» թերթը, որը այդ կուսակցությունը իր օրգանն էր համարում, պաշտպանեց սասունցիների ելույթը։ Սասունի 1894 թ. ապստամբությունը օսմանյան բռնապետության դեմ սասունցիների գարերով կուտակված ցասման ու զայրույթի արտահայտություններից մեկն էր։

Պատմական գիտությունների դոկտոր Հ. Պողոսյանը զեկուցեց «Ինքնապաշտպանական մարտերը Սասունում 1894 թ.» հարցի մասին։ Ընդհանուր ակնարկ գցելով Սասունի հին պատմության վրա, նա այնուհետև անդրադարձավ XIX դարում օսմանյան պետության վարած հայաշինջ քաղաքականությանը։ XIX դարի երկրորդ կեսից սկսած թուրքական կառավարությունը ուժեղացրեց քրդական ցեղերին սասունցիների դեմ հանելու իր քաղաքականությունը։ Սուլթան Աբդուլ Համիդը քրդական ցեղերին ձուլելու և նրանց ուժերը հայերի դեմ ուղղելու նպատակով 1891 թ. կազմակերպեց «Համիդիե» կոչված գնդեր և նրանց ուղղեց սասունցիների դեմ։ 1894 թ. Բ. Դուռը Սասուն ուղարկեց թուրքական 10-հազարանոց բանակ։ Անհավասար այդ կռիվներում լեռնական քաջերը պաշտպանվում էին հերոսաբար. մարտերին մասնակցում էին նաև կանայք։

Չնայած Սասունի կռվողների հերոսական շանքերին ապստամբությունը ճնշվեց և լեռնականները մեծ կորուստներ ունեցան։ Եվրոպական պետությունների և Ռուսաստանի միջնորդությունից հետո թուրքական զորքը հանվեց այնտեղից։ Ժամանակի առաջավոր մարդիկ եվրոպական և ռուսական մամուլի էջերում հանդես եկան սասունցիների դատի պաշտպանությամբ։ Հերոս լեռնականները թուրքական բռնապետության դեմ հանդես եկան նաև 1904 թ. իսկ 1915 թ. մի տարուց ավել Սասնա լեռնեբում ու կիրճերում կռվի դուրս եկան իրենց ժողովրդի և ընտանիքի գոյության ու պատվի պահպանության համար։

«Տարոնի հոգևորականությունը և Սասունի 1894 թ. ինքնապաշտպանական մարտերը» թեմայով հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու է. Կոստանդյանը։ Նա մասնավորապես նշեց, որ Տարոնում հայերի ինքնագիտակցության զարթոնքին մեծ դարկ տվեց Մկրտիչ Խրիմյանը իր սան և զինակից Գարեգին Սրվանձտյանցի հետ. վերջինս 1888 թ. միավորում է Ս. Կարապետի վանահայրությունը և Տարոնի հոգևոր առաջնորդությունը։ Նրան փոխարինում է Ներսես Խարախանյանը (վարդապետ, ապա եպիսկոպոս), որն անմիջական մասնակցություն է ունենում Սասունի 1891—1893 թթ. ինքնապաշտպանական մարտերին։ 1893 թ. ձերբակալությունից հետո նրան հաջորդեց Վարդան վարդապետ Հակոբյանը, որի ղեկավարությամբ 1894 թ. Սասունի շատ գյուղերի քահանաներ մասնակցում էին ժողովրդի ինքնապաշտպանական մարտերին։ Մեծ էր Վարդան վարդապետի դերը առանձնապես կոտորածներից փրկված աղետյալներին օգնելու գործում։ 1894-ի դեկտեմբերին Պետերբուրգ մեկնեց Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը՝ ռուսական ցարից օգնություն խնդրելու նպատակով։ Խրիմյանի վայելած ժողովրդականության շնորհիվ հաջողվեց Ռուսական կայսրության հայաբնակ վայրերում կազմակերպած համահայկական հանգանակությամբ հավաքել պատկառելի մի գումար և Կ. Պոլսի պատրիարքարանի միջոցով ուղարկել Սասուն։

Պատմական գիտությունների դոկտոր Ռ. Գ. Սահակյանի դեկուցումը նվիրված էր Սասունի դեպքերի արձագանքներին Ֆրանսիայում, հիմնականում փարիզյան թերթերում ու տարբեր հանդեսներում այդ տարիներին տպագրված գրքերում ու բրոշյուրներում արտահայտված կարծիքներին։ Մամուլի արձագանքներում նկատելի էր դեպքերի ողբերգական զարգացման ողջ պատասխանատվությունը Անգլիայի ու Ռուսաստանի վրա բարդելու միտումը։ Միայն Ժորժ Կլեմանսոյի խմբագրած „L'Homme libre" և Անրի Ռոշֆորի „L'intransigeant"-ը ինչպես և „Revue de Paris" հանդեսը համարձակորեն ներկայացրեցին կատարվածի իրական պատկերը։ 1896 թ. նոյեմբերի 3-ին պառլամենտում ընդարձակ ելույթ ունեցավ Ժան Ժորեսը և նշեց, որ սուլթան Արդուլ Համիդը Հայկական հարցից ազատվելու համար ոչնչացնում է իրեն խանգարող հպատակներին։ Նա մեղադրեց նաև եվրոպական մեծ տերություններին՝ շահադիտական նպատակներից բխող նրանց հանդուրժողականության համար։

Ն. Վ.

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ НАШИ ЮБИЛЯРЫ

Ս. Ն. ՍԱՐԻՆՅԱՆ
(Ծննդյան 70-ամյակի առթիվ)

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի նոյեմբերի 24-ի նիստը նվիրված էր ինստիտուտի գիտական աշխատակից, ակադեմիայի թղթակից անդամ, անվանի գրականագետ Սերգեյ Սարինյանի ծննդյան 70-ամյակին։

Բացելով նիստը՝ խորհրդի նախագահ, ակադեմիկոս էդ. Մ. Ջրբաշյանը գիտական խորհրդի և ինստիտուտի ողջ կոլեկտիվի անունից շնորհավորեց հոբելյարին ծննդյան յոթանասուներորդ տարելիցի առթիվ՝նշելով նրա ծառայությունները հայ գրականագիտությանը՝ մասնավորապես գրականության ինստիտուտում, ուր նա անցել է տասնամյակների բեղմնավոր գիտական ճանապարհ։ Հոբելյարին հանձնվեց ինստիտուտի տնօրինության շնորհավորական ուղերձը։

Ելույթներ ունեցան ինստիտուտի երիտասարդ և ավագ աշխատակիցներ Ռ. Նանումյանը, Գ. Հայրյանը, Ա. Ջաֆարյանը, Զ. Ավետիսյանը, Ա. Ղազինյանը և ուրիշներ։ Բոլոր ելույթներում ընդգծվում էր այն միտքը, թե անվանի գիտնականը իր մարդկային նկարագրով և գիտական բնավորությամբ առանձնանում է XX դարակեսին ասպարեզ իջած գրական գործիչների ականավոր սերնդի մեջ՝ մշտապես հաստատելով իրեն գիտական հարցադրումների վճռականությամբ ու խորությամբ, գրականագիտական վերլուծությունների փիլիսոփայական յայնախոհությամբ։

Ս. Սարինյանը 50-ականների այն «խոռվարարներից» է, որոնք առաջադրեցին ոչ միայն գրականագիտական նոր սկզբունքներ ու չափանիշներ, այլև կիրառեցին դրանք իրեն բաց համակարգ, որն անընդհատ փոփոխվում է բարեշրջության օրենքով՝ չվերածվելով մեկընդմիջտ տրված դոգմատիկ համակարգի։ Գրականագետի անցած ուղին, մանավանդ նրա նո-